Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 71. Կարգապահական տույժը կիրառելու և հանելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված դատական կարգադրիչի հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը: Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե մեկ տարուց ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից:

2. Նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին:

3. Դատական կարգադրիչի նկատմամբ կիրառվող տույժը ձևակերպվում է գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

4. Կարգապահական տույժի մասին դատական կարգադրիչը տեղեկացվում է նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, դատական կարգադրիչը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա կարգապահական տույժը համարվում է մարված:

6. Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից կարգապահական տույժը կարող է հանվել նշանակումից վեց ամիս հետո՝ մինչև մեկ տարին լրանալը, եթե դատական կարգադրիչը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում:

7. Դատական կարգադրիչի նկատմամբ պաշտոնի իջեցում կամ կոչման իջեցում՝ մեկ աստիճանով, կամ դատական կարգադրիչների ծառայությունից ազատում կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

8. Դատական կարգադրիչը պարտավոր է տալ գրավոր բացատրություններ, եթե իր նկատմամբ անցկացվում է ծառայողական քննություն: Ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը սահմանում է Դատական դեպարտամենտի ղեկավարը:

9. Ծառայողական քննության ժամանակահատվածում դատական կարգադրիչի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել՝ վարձատրության պահպանմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննությանը:

10. Դատական կարգադրիչի լիազորությունները կարող են կասեցվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:~~10. Դատական կարգադրիչի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս նրա լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում դատական կարգադրիչին աշխատավարձ վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է անմեղության հիմքով քրեական հետապնդումը դադարեցվելու կամ արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում:~~